ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Երազգավորսի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

Ասպրամ Վրույրի Հլղաթյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1.

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ 5

1.1. Կրթության որակ հասկացությունը և կրթության որակի սկզբունքները 5

1.2. Ավագ դպրոցում որակի ապահովման գործընթացը 8

ԳԼՈՒԽ 2.

ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 11

2.1. Ավագ դպրոցի ուսուցման համակարգին սովորողների հարմարման պայմանները և ավագ դպրոցում որակի ապահովման արդի հիմնախնդիրները 11

2.2. Հետազոտական աշխատանքի վերլուծություն 14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: ՀՀ-ում կրթությունը հռչակված է ռազմավարական ոլորտներից մեկը: Կրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը հանրակրթության ոլորտում պետական քաղաքականության մաս են կազմում: Այս քաղաքականության շրջանակներում կրթության ոլորտում անընդհատ փոփոխություններ են կատարվում, որոնք, սակայն, միշտ չէ, որ ընկալում է որպես բարեփոխումներ:

2006-2012թթ. ընթացքում ՀՀ-ում իրականացվեցին 12-ամյա հանրակրթական համակարգին անցման և եռամյա կրթակարգով առանձին գործող ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրերը, որոնց իրականացման արդյունքում ՀՀ հանրակրթական միջնակարգ դպրոցների մի մասը վերակազմակերպվեց ավագ դպրոցների՝ առաջացնելով մի շարք խնդիրներ:

Առանձին ավագ դպրոցների հիմնադրումը, որն ի սկզբանե նախատեսում էր ապահովել կրթական ծրագրերի ու հոսքերի բազմազանություն, կրթական հնարավորությունների ընդլայնված շրջանակ սովորողների համար, պետք է էապես նպաստեր ավագ դպրոցներում կրթության որակի բարելավմանը:

Սույն թեզի շրջանակներում հետազոտվել, ուսումնասիրվել և վերլուծվել են ՀՀ ավագ դպրոցներում առկա բազմապիսի խնդիրները՝ կրթական ծրագրերի բովանդակության, որակի և իրականացման բնագավառում:

Ավագ դպրոցի որակի ապահովումը հրատապ անհրաժեշտություն է ներկայիս կրթական համակարգի իրագործման մեխանիզմների արդյունավետության բարձրացման համար:

Աշխատանքի նպատակն է հետազոտել ավագ դպրոցի որակի ապահովման հիմնական մոտեցումները, իրականացվող գործողությունները՝ հաշվի առնելով կրթության նպատակադրումը, բովանդակությունը, ստացված արդյունքները և որակը, պարզել առկա խնդիրները և նախանշել դրանց լուծման ուղիները:

Աշխատանքի խնդիրներն են.

- հետազոտել ավագ դպրոցի կրթական ծրագրի իրականացման սկզբունքները,
- ներկայացնել ավագ դպրոցի կրթության որակի սկզբունքների պահպանման և կիրառման արդյունավետությունը,
- բացահայտել ավագ դպրոցի որակի ապահովման հիմնական խնդիրներն ու առաջարկել ՀՀ կրթական համակարգում իրատեսական լուծումներ,

- կատարել հետազոտական աշխատանք՝ ներկայացնելու ավագ դպրոցի որակի ապահովման արդի հիմնախնդիրները:

Ուսումնասիրության մեթոդները:

Հետազոտական աշխատանքն իրականացնելիս օգտագործել ենք գիտամեթոդական գրականության ուսումնասիրության, համեմատության, վերլուծության, դիտման, հարցազրույցի, անկետավորման մեթոդները:

Աշխատանքի կառուցվածքը:

Ավարտական աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, 2 գլուխներից՝ իրենց ենթագլուխներով, հետազոտական աշխատանքի վերլուծությունից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

1.1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՍԿԶԲՈՒՆՔԵՐԸ

Կրթության որակը բավականին բարդ ու տարողունակ հասկացություն է, որի կարևորությունը շեշտվում է նաև կրթությանն առնչվող միջազգային տարբեր փաստաթղթերում, ինչպես նաև տեղական օրենսդրություններում: Կրթության որակ սահմանելով օրենսդիրները հիմնականում նպատակ են ունենում սահմանել կրթության չափելի արդյունքներ, որոնք, կախված երկրից ու համատեքստից, որոշակիորեն տարբերվում են՝ չնայած նրանք հիմնականում փորձում են դրանք համապատասխանեցնել ՄԱԿ-ի տարբեր կառույցներում կրթության որակի վերաբերյալ ընդունված փաստաթղթերի տրամաբանությանը:

Կրթության որակ հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը և, չնայած սրանք երկու տարբեր հասկացություններ են, այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց: Եթե կրթության որակը հնարավոր չէ առանց կրթության մատչելիության, ապա մատչելիությունը իմաստազրկվում է առանց համապատասխան կրթական որակի ապահովման: Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում անհատապես կամ կոլեկտիվ եղանակով: Գիտելիքաստեղծ գործունեությունը որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության, ժողովրդավարական հասարակարգի զարգացման, կյանքի զարգացման նոր ուղիների ու մոդելների ստեղծման ու զարգացման:

Կրթությունը այնպիսի մի ոլորտ է, որը չի շրջանցում հասարակության որևէ անդամի, և այդ անդամներից յուրաքանչյուրը ոչ միայն փորձում է առավելագույնս ստանալ այդ գործընթացից, այլ նաև ունենալ սեփական մոտեցումները լսելի դարձնելու մեխանիզմներ՝ այդ գործընթացների վրա ազդելու տեսանկյունից: Այդ առումով կրթության որակի ապահովման համար պետք է գործառնեն թափանցիկ ու հաշվետվողական համակարգեր ու մեխանիզմներ, որոնք տարբեր շահառուների մասնակիցը կդարձնեն կրթական գործընթացին և վերջիվերջո նրանց կբավարարեն: Հասկանալի է, որ որևէ կրթական համակարգ չի կարող բավարարել բոլոր շահառուներին, սակայն նրանց մեծամասնության պարագայում կարելի է ասել, որ մեխանիզմը աշխատում է:

Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթն ուսումնառության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից, և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության:

Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում է նշվում են հետևյալ հիմնական կետերը.

1) կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում,

2) հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում,

3) բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում, որոնք տիրապետում և կիրառում են ժամանակակից դասավանդման մեթոդներ,

4) կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում:

Կան նաև շատ այլ զեկույցներ և հրապարակումներ, որոնք կրթության որակը բնութագրում են որակի գնահատման և զարգացման տեսանկյունից: Սպանբաուերը նշում է, որ դպրոցները պետք է ունենան որակի ապահովման բաղադրություն և իբրև օրինակ է բերում Ֆոքս Վելի տեխնիկական բոլեջը, որը բարձրագույն կրթության չափանիշներին համաձայն տրամադրում է կրթության որակի հետ կապված ցուցումներ և հրահանգներ[1]:

Հանրակրթության պետական կրթակարգի հիմնական նպատակներն են կրթության որակի ապահովումը և հանրակրթական համակարգի համապատասխանեցումը պետական զարգացման ներկա միտումներին և միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

Զարգացման ցուցանիշները ու ուղենիշները հիմնված են կրթության որակի ներքին և արտաքին ապահովման մի շարք հիմնական սկզբունքների վրա: Դրանք են.

Մատչելիություն: Մատչելիությունը շարունակում է մնալ Հայաստանի կրթական համակարգի խնդիրներից մեկը տարաբնույթ պատճառներով: Դրանց շարքին են դասվում կրթություն ստանալու հետ կապված խոչընդոտները (ներառյալ թաքնված ծախսերը), ծախսերը, կոռուպցիոն խնդիրները, ուսման վարձեր: Այս խնդիրները հաղթահարելու միջազգային փորձը կրթության մատչելիության ապահովումն է՝ առանց որևիցե խտրականության: Սովորողը պետք է իրավունք ունենա ընտրելու և սովորելու իր կարիքներին, անձնական ունակություններին ու նկրտումներին համապատասխան կրթական ոլորտում: Այսօր ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ ֆինանսական կամ այլ խնդիրների պատճառով կրթությունը և, հատկապես որակյալ կրթությունը մատչելի չէ հասարակության բոլոր շերտերին:

Հավասարություն և ներառում: Բոլոր երիտասարդներին կրթության հասանելիության ապահովման կարևոր սկզբունքներից է վաղ հասակից հավասար հնարավորությունների ապահովումը: Նրանք պետք է վստահ լինեն, որ որևէ անձնական կամ սոցիալական հանգամանք (սեռ, ռասա, ինքնություն, հաշմանդամություն, էթնիկական ծագում կամ կրոնական պատկանելիություն) չի կարող խոչընդոտ հանդիսանալ կրթական հնարավորությունների և ցանկությունների իրացման համար:

Հասարակական ազդեցություն: Կրթությունը պետք է համապատասխանի տվյալ հասարակության հիմնական կարիքներին ու նպաստի նրա զարգացմանը, ինչը պահանջում գիտակցել տվյալ համայնքի/հասարակության կարիքները, ինչպես նաև սովորողների սոցիալ-մշակութային պայմաններն և միջավայրի առանձնահատկությունները:

Մասնակցայնություն: Սովորողը պետք է իրավունք ունի ներգրավված լինելու կրթական գործընթացի բոլոր փուլերում՝ ծրագրի մշակումից մինչև որոշումների կայացման գործընթաց, ինչպես տվյալ կրթական համակարգի շրջանակում, այնպես էլ բաղադրության մշակման համատեքստում:

Կրթական գործընթացի մասնակիցների ակտիվ համագործակցություն: Սովորողների մասնակցությունը կրթական գործընթացին ենթադրում է, որ նրանք պետք է դառնան այդ գործընթացի գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ ու իրավասության շրջանակով:

[1] Spanbauer S. J. (1992) A Quality System for Education. Milwaukee, Wisconsin: ASQC Quality Press, p.11.

Համագործակցություն կրթական հաստատությունների միջև: Հայաստանյան կրթական հաստատությունների (նաև ոչ ֆորմալ կրթություն ապահովողների) միջև տեղի ունեցող համագործակցությունը ոչ բավարար է կամ գոյություն չունի, ինչը հնարավորություն չի տալիս համատեղել ունեցած ռեսուրսները և ավելացնել կարողությունները տարբեր կրթական ծրագրերի իրականացման ժամանակ:

Կրթական ցանկալի արդյունքներ ստանալու կարևորագույն նախապայմաններից է աշակերտակենտրոն ուսուցումը, որը պետք է ուղեկցվի մասնակցայնությամբ և կրթողի և սովորողի միջև համագործակցությամբ:

Կրթական գործընթացի մեկ այլ կարևոր հատկանիշներից է քննական մտածողության, նորարարական ու ստեղծագործական մոտեցումների խրախուսումը և զարգացումը սովորողների շրջանում: Նշված հատկանիշների զարգացման տարբեր մեթոդներ են կիրառվում, որոնք ներառում են բարձրագույն տեխնոլոգիաները, արվեստը և այլն:

Կրթական միջավայր (ֆիզիկական և հոգեբանական): Աջակցող կրթական միջավայրը կրթական գործընթացի կարևորագույն կողմերից է, որտեղ պետք է գերիշխի փոխադարձ վստահության մթնոլորտը, հարգանքը, ինչն իր հերթին խթան է հանդիսանում ստեղծագործականության և ինքնուրույնության համար: Այն իր հերթին կարևորում է կոլեկտիվ ուսուցումը և ամրապնդում սովորողների միջև հարաբերությունները:

Կրթական միջավայրում պետք է տեղ գտնեն ժողովրդավարական և ոչ-խտրական սկզբունքները, բազմազանությունը և հանդուրժողականությունը: Կրթական միջավայրում պետք է տեղ չգտնեն որևէ տեսակի բռնություն, չարաշահում, արհամարհանք կամ շահագործում:

Կրթական գործընթացի կարևորագույն բաղադրիչ են հանդիսանում տարածությունը, ենթակառուցվածքները, տեխնիկական հագեցվածությունը, որոնք մշտապես պետք է զարգանան՝ համապատասխանելով սովորողների նոր պահանջներին ու ժամանակի թելադրանքին:

Կրթական միջավայրի կարևոր բաղադրիչ է կրթողի և սովորողի ինքնուրույնությունը, որը նրանց հնարավորություն է տալիս առավել ադեկվատ պատասխանել նոր մարտահրավերներին ու խնդիրներին: Կրթական գործընթացում կարևոր է ոչ միայն սովորողների ուղղակի ներգրավվածությունը որոշումների կայացման, վերջնարդյունքների ձևավորման և որակյալ կրթություն ապահովելու համար, այլև որոշակի կրթական մակարդակներում այդ գործընթացին պետք է ներգրավված լինեն նաև ծնողները:

Կրթության կազմակերպման գործընթացը: ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 17-րդ հոդվածը[2] ևս անդրադառնում է կրթության կազմակերպման գործընթացին՝ նշելով, որ խմբային, անհատական ուսուցման եղանակներ, դասարաններ և գործընթացի այլ բաղադրիչներ, սակայն հիմնական ծանրությունը թողնվում է կրթության պետական չափորոշիչին: Օրինակ, դասարանների բազմաբանակությունը էական գործոն է, որն ազդում է որակի ապահովման վրա, սակայն այս մասին իրավական փաստաթղթերը բավականին քչախոս են:

1.2. ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ներկայում գերիշխում է կրթության պլանավորման այնպիսի մեթոդաբանություն, որի դեպքում կրթական վերջնարդյունքները հանդիսանում են ավագ դպրոցի կրթության կազմակերպման կարևորագույն

[2] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 17:

կառուցվածքային տարրերից մեկը: Ժամանակակից ավագ դպրոցների կրթական գործունեության արդյունավետության գնահատման համար գլխավորը ոչ թե ուսումնական գործընթացի պլանավորումը և իրականացումն է, այլ ուսումնառության վերջնարդյունքները՝ սովորողների ձեռք բերած գիտելիքը, կարողությունները և հմտությունները, ներառյալ ինքնուրույն ուսուցման և ինքնակրթության միջոցով ձեռք բերվածը: Որակի գնահատման գործընթացի ծանրության կենտրոնը տեղափոխվում է ուսումնական գործընթացի վերլուծությունից դեպի կրթական ծրագրերի իրականացման արդյունքում ձևավորված կարողությունների գնահատումը: Գնահատման համակարգն ավելի է կողմնորոշվում դեպի մասնագիտական և անհատական պատրաստվածության ստուգումը, և, առաջին հերթին, դեպի շրջանավարտների բուհ ընդունման և բուհերում մրցունակ լինելուն, որը և պետք է լինի կրթության արդյունքի գնահատման հիմնական չափանիշը: Այս պարագայում որակի ապահովման մեխանիզմները դառնում են կրթական համակարգի՝ ըստ ստացված արդյունքների կառավարման կենտրոնական բաղկացուցիչը:

Ավագ դպրոցների որակի ներքին ապահովման եվրոպական և տեղական չափորոշիչների և ուղենիշների կարգավորման գործընթացները վերաբերում են հետևյալ հիմնական տիրույթներին՝

1. Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ. հաստատություններն իրենց կրթական ծրագրերի, կրթական տարբեր աստիճանների որակի ու չափորոշիչների ապահովումը ենթադրում է համապատասխան քաղաքականության և դրան առնչվող ընթացակարգերի մշակում: Դրանք պետք է հետևողականորեն նպաստեն իրենց աշխատանքում որակի կարևորությունը և ապահովումը գնահատող միջավայրի զարգացմանը: Այն ձեռք բերելու համար ուսումնական հաստատությունները պետք է զարգացնեն և իրագործեն որակի շարունակական ամրապնդման ռազմավարություն՝ կարևորելով սովորողների և մյուս շահակիցների դերը:

2. Ծրագրերի և կրթական աստիճանների հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում. ուսումնական հաստատությունները պետք է ունենան ծրագրերի և կրթական աստիճանների հաստատման, պարբերական վերանայման և մշտադիտարկման հաստատված մեխանիզմներ:

3. Սովորողների ուսումնառության գնահատում. սովորողների ուսումնառությունը պետք է գնահատվի ընդունված և հանրությանը հասանելի չափանիշներով, սահմանված կարգով ու ընթացակարգերով, որոնք համահավասար են կիրառվում:

4. Մանկավարժական-ուսուցչական կազմի որակի ապահովում. ավագ դպրոցները և համապատասխան ուսումնական հաստատությունները պետք է ունենան որակյալ և բանիմաց կազմով համալրվելու մեխանիզմներ: Դասավանդող անձնակազմը պետք է մասնակցի արտաքին վերանայմանը, և նրանց կատարած աշխատանքի որակի մասին տեղեկատվությունը պետք է արտացոլվի ավագ դպրոցի տարեկան գնահատման զեկույցում:

5. Ուսումնառության ռեսուրսներ և աջակցում սովորողներին. ուսումնական հաստատությունները պետք է հավաստեն, որ սովորողներն ապահովված են առարկայական ծրագրերով նախատեսված ռեսուրսներով:

6. Տեղեկատվական համակարգեր. ուսումնական հաստատությունները պետք է հավաստեն, որ իրենց ուսումնական ծրագրերի և այլ գործառույթների կառավարման արդյունավետության համար հավաքագրում, վերլուծում և օգտագործում են համապատասխան տեղեկատվությունը:

7. Հրապարակայնություն. ուսումնական հաստատությունները պետք է իրենց առաջարկած ծրագրերի և կրթական աստիճանների վերաբերյալ մշտապես հրապարակեն անհրաժեշտ տեղեկատվություն:

Այս յոթ տիրույթից յուրաքանչյուրի համար սահմանված են որոշակի չափանիշներ և չափորոշիչներ, որոնք պետք է ընկալվեն որպես որակի ապահովման համար անհրաժեշտ ուղենիշներ:

ԳԼՈՒԽ 2. ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՊԱՑՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Այսօր ամենուր լսում ենք, որ ապրում ենք բազմազան և անընդհատ փոփոխվող աշխարհում: Իհարկե, ոչ միայն լսում ենք, այլև ականատեսն ենք, հաճախ նաև մասնակիցը այդ փոփոխությունների: Բնականաբար, փոփոխվում, զարգանում են նաև գիտությունները: Դեռևս մի քանի տասնամյակ առաջ որևէ գիտական հայտնագործություն ոչ միայն հիացմունք, այլև զարմանք էր առաջացնում մարդկանց մեջ, իսկ այսօր արդեն դրանք այնքան են հաճախացել, որ զարմանալու հատկությունը մեզանում աստիճանաբար բթանում է, հիանալու ունակությունն էլ ձեռք է բերել ավելի նուրբ արտահայտչականություն: Ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում գիտական գիտելիքները կրկնապատկվում են, և անհրաժեշտություն է դառնում դրանք մարդուն հասանելի դարձնելու նոր ուղիներ և մեթոդներ որոնել:

Զարմանալի չէ, որ փոփոխությունների է ենթարկվում նաև կրթական համակարգը: Պարզ է, որ այս տեսանկյունից պետք է դիտարկել ՀՀ կրթական համակարգի ժամանակակից բարեփոխումները և ընկալել, որ դրանք միտված են դպրոցների գործունեության բարելավմանը և նպաստում են համաշխարհային կրթական միասնական տարածք մուտք գործելուն: Կարծում ենք՝ նաև ժամանակի պահանջն էր հանրակրթությունը հիմնական և ավագ առանձին գործող դպրոցների վերածելու: Իհարկե, գործող համակարգի յուրահատկությունը, նրա էական տարբերությունները Հայաստանում գործող ավանդական կրթական համակարգից մի շարք բարդություններ են կանխորոշում, որոնց բախվում է այսօրվա ավագ դպրոցի սովորողը: Եվ հատկապես կարևորվում են այն հարցերը, որոնք կապված են կրթական գործընթացի սուբյեկտներին նոր համակարգին հարմարեցնելու՝ «ադապտացնելու» հետ:

Ավագ դպրոցի ուսուցման հարմարումը բարդ և տարաբնույթ գործընթաց է՝ պայմանավորված նոր մանկավարժական համակարգ անհատի մուտքով՝ ուսուցչի ղեկավարությամբ: Այդ գործընթացը ձևավորում է գործունեության նոր կառուցվածք՝ կապված ուսուցման նորովի կազմակերպման հետ: Ավագ դպրոցականների ուսուցման հարմարման ուղղությամբ մի քանի դպրոցներում կատարած դիտարկումների հիման վրա մենք առանձնացրել ենք աշխատանքի հետևյալ ուղղությունները՝

ա) ուսումնական գործընթացի կազմակերպում,

բ) աշակերտական կոլեկտիվի ձևավորում,

գ) դաստիարակություն և ինքնադաստիարակություն,

դ) մասնագիտական կողմնորոշում,

ե) արտաուսումնական գործունեության իրականացում:

Ավագ դպրոցը մինչև նոր ուսումնական տարին սկսելը պետք է պատրաստ լինի ընդունելու հիմնական դպրոցներից, ինչպես նաև այլ ուսումնական համակարգերից իրենց մոտ տեղափոխված աշակերտների, այսինքն՝ մինչև այդ պրոցեսի կազմակերպումը պահանջ է առաջանում որոշակի նախապատրաստական աշխատանքի իրականացման:

Այդ աշխատանքներից մեկը ավագ դպրոցի ուսուցիչների վերապատրաստումն է: Երկրորդը՝ դպրոց-բուհ համակարգի ստեղծումը, ապահովում է ավագ դպրոցի՝ բուհերի հետ ակտիվ համագործակցությունը ուսումնական թեմատիկ ծրագրերի համատեղ քննարկման և կազմման, մասնագիտական կողմնորոշման, համատեղ միջոցառումների կազմակերպման, փոխադարձ այցելությունների գրաֆիկի ճշտման և այլ ուղղություններում: Երրորդ՝ նախապատրաստական

աշխատանքներում շատ կարևոր է դպրոցի նյութատեխնիկական ապահովության խնդիրը: Ցավոք, այս հարցում միշտ չէ, որ ավագ դպրոցը կարող է դպրոցի բյուջեի միջոցներով, օրինակ, դպրոցի շենքը պահել ոչ միայն բարվոք վիճակում, այլև կատարել հիմնանորոգման կամ ընթացիկ նորոգման աշխատանքներ: Այստեղ անհրաժեշտություն է ծագում լրացուցիչ ֆինանսական միջոցների ներդրման, որն էլ պետությունը իրականացնում է պլանավորված կարգով: Մուտք գործելով ավագ դպրոց՝ աշակերտն առաջին հերթին պետք է զգա, որ այստեղ իրեն սպասում էին, այսինքն՝ նախամասնագիտական կրթություն ստանալու իր ցանկությունը համապատասխանում է դպրոցի՝ նրան այդպիսի կրթություն տալու ցանկությանը: Նրան պետք է բացատրվեն հոսքային ուսուցման մեխանիզմները և ապագա նշանակությունը՝ չժխտելով մինչև այդ նրա՝ այլ համակարգում (հիմնական դպրոցում) ուսումնառության կարևորությունը (դպրոցը ի վիճակի պետք է լինի՝ պահելով հինը, կառուցել նորը): Դպրոցականի՝ ավագ դպրոցին հարմարվողականությանը մեծ չափով նպաստում են մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Սովորաբար, ավագ դպրոց ընդունվողները, ըստ կողմնորոշվածության, բաժանվում են երեք կատեգորիայի՝

1) ամբողջովին կողմնորոշվածներ,

2) մասնակի կողմնորոշվածներ,

3) չկողմնորոշվածներ:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է: Այս նպատակով վերջին տարիներին սկիզբ է դրվել բազմաթիվ նախաձեռնությունների, որոնք ներառում են կրթության որակը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները՝ մարդկային ռեսուրսները, ծրագրամեթոդական ապահովումը, նորմատիվ-իրավական դաշտը, ինստիտուցիոնալ համակարգը: Բարեփոխումների առանցքային նախաձեռնություններից մեկն անցումն էր 12-ամյա հանրակրթական համակարգին, որի իրականացումը սկսվել է 2006 թվականին և ավարտին է հասել 2012 թվականին: Այս գործընթացի շրջանակներում 2009-2010 ուսումնական տարվանից ներդրվել է եռամյա ավագ դպրոցի համակարգը: Սակայն որակական տեսանկյունից այն ունի մի շարք բացեր և հիմնախնդիրներ, որոնք օր առաջ լուծման կարիք ունեն:

Վերջին երկու տասնամյակում արմատապես փոխվել է հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը, որը կրթական համակարգին ներկայացնում է նոր պահանջներ: Անդամակցելով Եվրոխորհրդին՝ մեր հանրապետությունը չի կարող մեկուսանալ միջազգային կրթությանն ինտեգրվելու գործընթացներից: Հետևաբար, ելնելով կրթության համակարգի բարեփոխումների անհրաժեշտությունից, այն պետք է ընդունել՝ պահպանելով ազգայինը, որովհետև յուրաքանչյուր երկրում այն ընդունվում է առանձնահատուկ եղանակով՝ հասարակական-պատմական պայմաններին համապատասխան: Կրթական

համակարգի արդիական խնդիրների լուծումը մեծապես կախված է ծրագրային բարեփոխումներից, իսկ բարեփոխումները պետք է ուղղված լինեն կրթության որակի բարձրացմանը և ոչ թե միայն եվրոպական արժեքների յուրացմանը: Թերևս տեղին է անդրադառնալ ռուս հանճարեղ մանկավարժ-հոգեբան Կ. Դ. Ուշինսկու հիմնավոր պահանջներին. «Ամեն մի ազգ ունի դաստիարակության իր առանձնահատուկ ազգային սիստեմը, դրա համար էլ անհնարին է մեկ ժողովրդի կողմից մեկ ուրիշ ժողովրդից դաստիարակչական սիստեմը փոխ առնել: Դաստիարակության գործում մյուս ժողովուրդների ունեցած փորձը թանկագին ժառանգություն է բոլորի համար, բայց ինչպես չի կարելի ապրել ուրիշ ժողովրդի ձևով, որքան էլ գրավիչ լինի այդ ձևը, ճիշտ այդպես էլ չի կարելի դաստիարակել ուրիշի մանկավարժական սիստեմով, որքան էլ այն լինի գեղեցիկ ու լավ մտածված»[3]:

Որակյալ կրթություն ասելով պետք է հասկանալ գիտելիքահենություն, մանկավարժական արհեստավարժություն, աշակերտակենտրոն մոտեցում, հարմարավետ պայմաններ որակյալ կրթությունն ապահովելու համար և պետական հետևողականություն կրթական գործընթացներին: ՀՀ կրթական հաստատություններն ապահովված չեն ավագ դպրոցներին անհրաժեշտ շենքային պայմաններով: Չկան առարկայական լաբորատորիաներ և կահավորված կաբինետներ, համակարգիչներով հագեցած դասասենյակներ, ընթերցասրահներ, ֆիզկուլտուրայի դահլիճ, բարեկարգ ճաշարան: Եթե այս պայմաններով պետք է ինտեգրվել եվրոպական կրթական համակարգին, ապա պետք է հիշել, որ նույն Եվրոպայում 15-18 տարեկան պատանիները խորհրդային տարիներից ժառանգություն ստացած խարխուլ դպրոցներում չեն սովորում: Մենք ապրում ենք 21-րդ դարում և սովորող խելացի երեխան և նրան կրթող ուսուցիչը արժանի են նորմալ պայմաններում սովորելու և աշխատելու, որը խթան է կրթության որակի բարձրացման:

Ավագ դպրոցը կկայանա, եթե ունենանք կայացած տարրական դպրոց, որը կապահովի ավագ դպրոցի հետագա զրաղացումը: Այսօր հանրապետության շրջաններում դժվարանում են կազմակերպել կրթական գործընթացը՝ բազմակոմպլեկտ դասարանների առկայության պայմաններում: Նախ անհրաժեշտ է մշակել նոր մոտեցումներ, նոր մեխանիզմներ, ստեղծել պայմաններ, որ շրջաններում, սահմանամերձ տարածքներում դպրոցները չփակվեն երեխա չլինելու պատճառով, այնուհետ մտածել ավագ դպրոցի կազմակերպման ու զարգացման մասին:

2.2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ավագ դպրոցների (12-ամյա կրթության) համակարգը ՀՀ կրթական համակարգում ներդրվել է ոչ շատ վաղ անցյալում և դեռ շարունակում է իր զարգացման փուլերն անցնել:

Հաշվի առնելով ավագ դպրոցներում առկա մի շարք խնդիրները և դրանց լուծում տալու կարևորությունը՝ մեր աշխատանքի շրջանակներում կատարվել է ուսումնասիրություն այս ոլորտում և փորձ է արվել սույն աշխատանքով առաջարկել որոշակի լուծումներ դրանց համար:

Աշակերտների, ուսուցիչների կարծիքները. հարցումների արդյունքներ: Հետազոտական աշխատանքի շրջանակներում ավագ դպրոցներում իրականացված հարցումները նպատակ ունեն ուսումնասիրել և վեր հանել այն հիմնախնդիրները և դրանց առաջացման պատճառները, որոնք առկա են ավագ դպրոցներում:

Հարցումը անցկացվել է ֆոկուսային երկու խմբերի շրջանում: Հարցման շրջանակները ներառում են ավագ դպրոցների աշակերտներին և ավագ դպրոցում դասավանդող ուսուցչական կազմը:

[3] Կ. Դ. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, I հատոր, 1958 թ., էջ 28:

Հարցաշարը կազմվել է մեծամասամբ ընտրանքային հարցերի տեսքով՝ միաժամանակ թույլ տալով հարցաշարը լրացնողին որոշ հարցերում արտահայտել իր սեփական կարծիքը տվյալ հարցի վերաբերյալ:

1. Ավագ դպրոցների աշակերտների շրջանում անցկացված հարցումների ամփոփում

Հարցմանը մասնակցել են ընդհանուր թվով 78 աշակերտ, որոնք սովորում են 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում:

Հարցաթերթը պարունակում է 10 փակ հարցեր:

Հարցման մասնակիցներից 52%-ը արական սեռի են, իսկ իգական սեռի ներկայացուցիչները՝ 48% (Տե՛ս Գծապատկեր 1):

Ավագ դպրոցում կրթության մակարդակը այնքան էլ չի բավարարում է աշակերտների պահանջները: Հարցվածների 62%-ին չի բավարարում այն առարկաները որոնք առաջարկված են ավագ դպրոցի կրթական ծրագրով: Դրա մասին է վկայում ստորև ներկայացված պատկերը (Տե՛ս Գծապատկեր 3):



Գծապատկեր 3

Նման արդյունքից հետո, հավելյալ ազատ ընտրության մեթոդով աշակերտներին հնարավորություն էր տրվել ընտրել այնպիսի առարկաներ, որոնք նրանք կուզենային, որ դասավանդվեր դպրոցում: Անհրաժեշտ է նշել, որ աշակերտների կողմից մեծ ուշադրության են արժանացել ինժեներիան, ծրագրավորումը և հավելյալ լեզուները, իրավունքի հիմունքները: Ստորև ներկայացվում է առարկաների ցանկը ցուցակը (առարկաները դասակարգվել են ըստ պահանջարկի).

Առարկա	Աշակերտների քանակը
Հավելյալ լեզուներ	23
Ծրագրավորում	28
Իրավունքի հիմունքներ	15
Ինժեներիա (Ռոբոտաշինություն)	11
Քաղաքագիտություն	6
Տնտեսագիտություն	18
Մեդիագրագիտություն	14
Մշակութաբանություն	7
Այլ առարկաներ	9

Աղյուսակ 1

Ինչ վերաբերում է ավագ դպրոցն ավարտելուց հետո կրթությունը շարունակելուն, աշակերտները տվել են գրեթե հավասարազոր պատասխաններ, որոնց ընդհանուր պատկերը հետևյալն է (Տե՛ս Գծապատկեր 4):

Գծապատկեր 4

Աշակերտները գնահատել են նաև իրենց ստացած գիտելիքների մակարդակը: Ի ուրախություն մեզ՝ սովորողները հստակ կարողացան գնահատել՝ արդյո՞ք բավարարված են, թե ոչ: Ձկողմնորոշված սովորողներ այս



հարցի շուրջ չկային: Արդյունքը՝ գծապատկերում (Տե՛ս Գծապատկեր 5)

Հաջորդ հարցումը վերաբերում է առարկաների ցանկին: Աշակերտների մեծամասնությունը հակված է, որ դպրոցների ուսումնական ծրագիրը պետք է լինի ճկուն՝ հնարավորություն տալով սովորողին ինքնուրույն ընտրելու և առարկաներից պետք է ավելանան լեզուների և մաթեմատիկական գիտությունների ժամերը, մինչդեռ բնագիտական առարկաների, ինչպիսիք են՝ քիմիան, ֆիզիկան, կենսաբանությունը, ինչպես նաև պատմության ժամերը պետք է կրճատվեն կամ հանվեն դասացուցակից: Սովորողները նաև կարևորել են ուսուցչի կողմից կիրառվող մեթոդները դասանյութը հետաքրքիր և ամբողջական ըմբռնելու համար:

Ստորև ներկայացնում ենք աշակերտ-ուսուցիչ-դպրոց հարաբերությունների մասին հարցումների արդյունքները. (Պետք է նկատել, որ աշակերտների վերաբերմունքը ավագ դպրոցին կարելի գնահատել լավ՝ հաշվի առնելով նրանց՝ ստորև ներկայացված պատասխանները)

- Ընդհանուր հարցվածների 75%-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարևորում է ուսուցիչ-սովորող կապը դպրոցում:
- Ընդհանուր հարցվածների 44%-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ դպրոցում գործող կարգ ու կանոնները օրինաչափ են բոլորի համար:
- Ընդհանուր հարցվածների 38%-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) չի ձանձրանում դպրոցում:
- Ընդհանուր հարցվածների 28%-ի (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծիքով՝ իր դպրոցի տեխնիկական հագեցվածությունը բավարար է անհրաժեշտ կրթությունն ստանալու համար:

Ավագ դպրոցների ուսուցչական կազմի շրջանում անցկացված հարցումների ամփոփում

Հետազոտական աշխատանքի շրջանակներում ավագ դպրոցներում որակի ապահովման գնահատմանն ուղղված իրականացված հարցումներին մասնակցել է 24 ուսուցիչ:

Հարցաշարը բաղկացած էր 10 փակ հարցերից:

Հարցմանը մասնակցած ուսուցիչների (որոնց մեջ մեծամասնություն են կազմում 10-20 տարի մանկավարժական փորձ ունեցողները) 83%-ի կարծիքով՝ այսօր ավագ դպրոցի կրթական ծրագիրը աշակերտի պահանջներին չի բավարարում, իսկ 17%-ն էլ կարծում է հակառակը:

Առարկայական մեթոդմիավորումների ավագ դպրոցներում արդյունավետության մասին ուսուցիչների 67%-ը ունի բացասական վերաբերմունք:

Ուսուցիչները ուսուցիչ-դպրոց-աշակերտ հարաբերությունների մասին.

- Ընդհանուր հարցվածների 54%-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ իր դասավանդած առարկան կարևորվում է աշակերտների կողմից:
- Ընդհանուր հարցվածների 42%-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ առարկային հատկացված դասաժամերը բավարարում են աշակերտներին հիմնավոր գիտելիքներ տալու համար:
- Ընդհանուր հարցվածների 38%-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) մասամբ համաձայն է այն կարծիքին, թե առարկայի դասավանդման ծրագիրը լիովին բավարարում է դպրոցի պահանջներին:

- Ընդհանուր հարցվածների 57%-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ դպրոցում ուսուցիչները հնարավորություն ունեն անընդհատ զարգանալու:
- Ընդհանուր հարցվածների 57%-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ դպրոցում ուսուցիչները վստահում են միմյանց:
- Ընդհանուր հարցվածների 43%-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ դպրոցների պայմանները բավարար են ուսուցիչների համար աշխատանքային միջավայր ապահովելու համար:
- Ընդհանուր հարցվածների 32%-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) չի կարծում, որ ավագ դպրոցը օգնում է աշակերտներին պատրաստվել համալսարանական կրթությանը:
- Ընդհանուր հարցվածների 54%-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ ավագ դպրոցը նպաստում է աշակերտների ունակությունների զարգացմանը:
- Ընդհանուր հարցվածների 39%-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ ավագ դպրոցում առարկաների ավելացումը կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

Ավագ դպրոցներում դասավանդվող առարկաների արդյունավետության ուսումնասիրությունը և դրանց հատկացված ժամաքանակի արդյունավետության ուսումնասիրությունը ավագ դպրոցի սովորողների և ուսուցիչների շրջանում ցույց են տալիս, որ ավագ դպրոցներում հնարավոր չափով մասնագիտական կամ ընտրական առարկաների ներդրման, առարկաների ժամաքանակի կարգավորման և դրանց ներդրմանն ուղղված քայլերի անհրաժեշտություն կա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կատարած հետազոտության արդյունքում կարող ենք փաստել, որ Հայաստանում ներկայումս գործող ավագ դպրոցների կրթական որակի, նոր պահանջներին բավարարելու և տեխնիկական հագեցվածության տեսանկյունից բավականին լուրջ հիմնախնդիրներ կան: Ավագ դպրոցը մինչև նոր ուսումնական տարին սկսելը պետք է պատրաստ լինի ընդունելու հիմնական դպրոցներից, ինչպես նաև այլ ուսումնական համակարգերից իրենց մոտ տեղափոխված աշակերտների, այսինքն՝ մինչև այդ պրոցեսի կազմակերպումը պահանջ է առաջանում որոշակի նախապատրաստական աշխատանքի իրականացման:

Այդ աշխատանքներից են՝

1. Ավագ դպրոցի ուսուցիչների վերապատրաստումը,
2. Դպրոց–բուհ համակարգի ստեղծումը, որը ապահովում է ավագ դպրոցի՝ բուհերի հետ ակտիվ համագործակցությունը ուսումնական թեմատիկ ծրագրերի համատեղ ֆինարկման և կազմման, մասնագիտական կողմնորոշման, համատեղ միջոցառումների կազմակերպման, փոխադարձ այցելությունների գրաֆիկի ճշտման և այլ ուղղություններում:
3. Նախապատրաստական աշխատանքներում շատ կարևոր է դպրոցի նյութատեխնիկական ապահովության խնդիրը: Ցավոք, այս հարցում միշտ չէ, որ ավագ դպրոցը կարող է դպրոցի բյուջեի միջոցներով, օրինակ, դպրոցի շենքը պահել ոչ միայն բարվոք վիճակում, այլև կատարել հիմնանորոգման կամ ընթացիկ նորոգման աշխատանքներ:
4. Պետության կրթական այս պրոցեսի համակարգային հետևումը և իրականացումը:
5. Մուտք գործելով ավագ դպրոց՝ աշակերտն առաջին հերթին պետք է զգա, որ այստեղ իրեն սպասում էին, այսինքն՝ նախամասնագիտական կրթություն ստանալու իր ցանկությունը համապատասխանում է դպրոցի՝
   նրան այդպիսի կրթություն տալու ցանկությանը: Նրան պետք է բացատրվեն հոսքային ուսուցման մեխանիզմները և ապագա նշանակությունը՝ չժխտելով մինչև այդ նրա՝ այլ համակարգում (հիմնական դպրոցում) ուսումնառության կարևորությունը (դպրոցը ի վիճակի պետք է լինի՝ պահելով
   հինը, կառուցել նորը):
6. Աշակերտը պետք է զգա նաև, որ նոր ուսումնադաստիարակչական միջավայր ինքը մուտք է գործում, ճիշտ է, անծանոթ, բայց նաև բարեկամ ուսուցչի ղեկավարությամբ, որի օգնությամբ էլ ձևավորվում է նրա գործունեության նոր կառուցվածքը՝ կապված ուսուցման նոր գործընթացի հետ:
7. Ուսուցիչը, արդեն իսկ կարևորելով հարմարման նշանակությունը և այն համարելով իր (նույնն է թե՝ դպրոցի) գործունեության հաջողությունը, պետք է մշտապես հիշի, որ հարմարումը նաև ուսուցման սուբյեկտների և նոր դինամիկ միջավայրի փոխգործակցության նպատակաուղղված գործընթաց և արդյունք է, որը կարգավորվում է հատուկ միջոցների ու մեթոդների օգնությամբ, որն էլ ապահովում է

սուբյեկտների ակնկալիքների, նրանց հնարավորությունների և դիդակտիկ միջավայրի փոխհամաձայնություն:

8. Ավագ դպրոցներում դասավանդվող առարկաների արդյունավետության ուսումնասիրությունը և դրանց հատկացված ժամաքանակի արդյունավետության ուսումնասիրությունը ավագ դպրոցի սովորողների, նրանց ծնողների և ուսուցիչների շրջանում ցույց են տալիս, որ ավագ դպրոցներում հնարավոր չափով մասնագիտական կամ ընտրական առարկաների ներդրման, առարկաների ժամաքանակի կարգավորման և դրանց ներդրմանն ուղղված քայլերի անհրաժեշտություն կա:

Այլ խոսքով՝ բավական չէ դպրոցի (ուսուցչի) ցանկությունը աշակերտի ադապտացիան նոր պայմաններում իրագործելը, նա նաև կրողը պետք է լինի հատուկ միջոցների և մեթոդների՝ սովորողի հետ փոխգործակցային հարաբերություններ ստեղծելու համար:

Կատարած հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել են ՀՀ ավագ դպրոցներում կրթության որակի բարելավմանն ուղղված մի շարք առաջարկություններ՝ ըստ առանձին բաղադրիչների.

Ընդհանուր բնույթի առաջարկություններ

1. Իրականացնել հանրային իրազեկման արշավներ՝ տեղեկացնելով բնակչության լայն զանգվածներին հանրակրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումների մասին, շեշտելով դրանց դրական ազդեցությունը կրթության և հասարակական կյանքի այլ բնագավառների վրա:
2. Օգտագործելով տարբեր PR տեխնոլոգիաներ՝ ձևավորել ԿԳՄՍՆ, հանրակրթության համակարգի, դպրոցների և ուսուցիչների դրական իմիջ հասարակության մեջ:
3. Մշակել ուսուցիչների վարձատրության մրցակցային մեխանիզմներ՝ խթանելու ուսուցիչների ինքնակրթությունը և նպաստելու կրթության որակի բարելավմանը:
4. Մշակել դպրոցի 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում նախատեսված կրկնության և ավարտական միասնական քննություններին նախապատրաստման հստակ մեթոդաբանություն՝ պարտադրելով դպրոցին կատարելու իր առջև դրված պարտականությունները և մատուցելու կրթական ծրագրերով նախատեսված ծառայությունները:
5. Մշակել դպրոցում կրթության որակի մշտադիտարկման մեթոդաբանություն, որը հնարավորություն կտա հաշվի առնել սովորողների և ծնողական համայնքի կարծիքը դպրոցի կողմից մատուցվող կրթական ծառայությունների վերաբերյալ:

Ավագ դպրոցներում չափորոշչային առաջարկներ

1. Վերանայել հանրակրթական չափորոշիչները, ծրագրերը և ուսումնական պլանները՝ գործընթացի մեջ ներգրավելով միջնակարգ և ավագ դպրոցների փորձառու ուսուցիչներին:
2. Ապահովել չափորոշիչների չափելիությունը:
3. Մշակել չափորոշիչների ապահովումը ստուգելու գործիքներ և ընթացակարգեր:
4. Կրթական չափորոշիչները չապահովելու դեպքում նախատեսել որոշակի պատժամիջոցներ դպրոցի տնօրենի և/կամ ուսուցչի նկատմամբ, ինչպես նաև խնդիրը լուծելու գործուն ընթացակարգեր:
5. Ապահովել դպրոցի ուսումնական պլանի ճկունությունը՝ «Հանրակրթության մասին» օրենքին համաձայն՝ դպրոցներին տրամադրելով գործնական ճկունություն, որը հնարավորություն կտա համապատասխանեցնել կրթական ծառայությունները սովորողների մասնագիտական

կողմնորոշմանը, հետաքրքրություններին, սոցիալական, տնտեսական և տարածաշրջանային առանձնահատկություններին, ինչպես նաև ապահովելով դպրոցների մրցունակությունը:

6. Վերանայել դպրոցական դասագրքերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով առարկաների հաջորդականությանը և փոխհամաձայնեցմանը, կրթության շարունակականության ապահովմանը, ինչպես նաև շարադրանքի, լեզվի մատչելիությանը:
7. Համաձայնեցնել դպրոցական ծրագրերը և դասագրքերը բուհ ընդունվելու պահանջներին՝ նպաստելով նաև շտեմարանների հետ դրանց հակասության խնդրի լուծմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Բոլոնյան գործընթացը Հայաստանում», ուղեցույց, Երևան, 2008:
2. «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ», Երևան, 2003:
3. Լիզա Հարոյան, Ավագ դպրոցի կազմակերպման հիմունքները և զարգացման հեռանկարները՝
4. «Կրթական բարեփոխումներ. հարցեր և պատասխաններ», Երևան. 2005:
5. «Կրթություն» շաբաթաթերթ 2010-11-12-13-14-15:
6. «Կրթության մասին» ՀՀ օրենք:
7. Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում՝ http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf
8. Հանրակրթական միջնակարգ և ավագ դպրոցների կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն ՋԵԿՈՒՑՑ, Երևան, 2015, 86 էջ: https://www.vsu.am/grqer/2016/aprak/haroyanliza.pdf
9. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
10. ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյան, կրթություն շաբաթաթերթ, 04.04.2012:
11. «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման» կարգը:
12. ՀՀ Սահմանադրություն:
13. Յու. Լ. Սարգսյան, Ա. Ս. Բուդաղյան, «Բարեփոխումների ռազմավարության հիմնադրույթները», Երևան, 2007:
14. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք:
15. Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, I հատոր, 1958 թ., էջ 28:
16. Murgatroyd S. & Morgan C. (1994) Total Quality Management and the School. Buckingham/Philadelphia: Open University Press.
17. Spanbauer S. J. (1992) A Quality System for Education. Milwaukee, Wisconsin: ASQC Quality Press.